— Ուրիշ հիւրեր չեն լինի. միայն մեր վարժապետը եւ մէկ էլ մեր հարեւան քուրդ Աղասի-բեկը:

— Աղասի-բեկը հազիւ թէ կարող կը լինի գալ, — նկատեց կինը, — նրա որդին սաստիկ հիւանդ է, արդէն մի շաբաթ կը լինի, որ դպրոց չէ գնացել:

— Վտանգը անցած պէտք է համարել, — պատասխանեց այրը, — երէկ բժիշկն ինձ ասաց, թէ այժմ առողջանալու վրայ է:

Կինը ուրախացաւ:

Աշխէնը խնդրեց մօրից, որ փունջը իրան տայ: Ինքը տուն տանէ: Մայրը կատարեց նրա ցանկութիւնը:

— Օ՜, որքան շատ գոյներ կան այստեղ, տասն գոյն, — զարմանալով բացագանչեց նա եւ վազեց դէպի տուն:

Մայրը նոյնպէս հեռացաւ: Կարօն նայում էր նրանց ետեւից եւ կոշտացած ձեռքով սրբում էր ուրախութեան արտասուքը: Դրանք այն ամուսիններից էին, որոնց վրայով տարիները անցնում էին, մարդը ծերանում է, իսկ սէրը մանկանում է:

Կէսօրից առաջ քարաշէն տան դռանը մօտեցաւ մի ճանապարհորդական կառք: Ցած իջաւ մի ծիծաղադէմ երիտասարդ, թեթեւ մօրուքով եւ ցած բերեց մի մանկահասակ կնոջ, նրանցից յետոյ վեր եկաւ աղախինը, որ գրկած ունէր մի կլորիկ երեխայ: «հիւբբիե՜... «արփարե՜... անունները հնչեցին ուրախաձայն աղաղակներով, եւ դռներից դուրս թափոեցան ընդունելու թանկագին հիւրերին:

Մէկը Կարօյի փեսան էր, միւսը՝ նրա դուստրը:

Մի քանի ժամից յետոյ խաղաղ գերդաստանը բոլորեց ճաշի սեղանի շուրջը: Նա գոհ էր, որովհետեւ ապրուստի ամէն յարմարութիւններ ունէր: Նա երջանի՜կ էր, որովհետեւ վայելում էր ընտանեկան քաղցր, անսպառ բերկրութիւնը:

Բ

Եթէ մի մարդ անցնելու լինի Աղբակ գաւառի Սուրբ Բարղուղիմէոս առաքելոյ վանքից դէպի Բաշ-կալէ տանող ճանապարհով, վանքից ոչ այնքան հեռու, իսկոյն կնկատէ, որ ամէն առաւօտ մի ծերունի, ձիւնի պէս ճերմակ մազերով, հեծած նոյնպէս ճերմակ ձիու վրայ, մի շրջան է կատարում լեռնահովիտների միջով եւ ապա, երբ միջօրէի տօթը սկսում է այրել, վերադառնում է դէպի մերձակայ գիւղը: Ապիտակ ձին նոյնպէս ծեր է, որպէս նրա